



Հայաստանաբնակ քանդակագործ Անդրանիկ Սարգսյանը վաղուց մտահղացում ուներ կերտելու Մառնեուլի շրջանի Շահունյան ավանում 1844 թվականին կառուցված «Սուրբ Աստվածածին» եկեղեցու խորանը:

Ահավասիկ, 2013 թվականի հունիսի 21-ին եկեղեցատեղ արվեստագետը

իրականություն դարձրեց իր վաղեմի երազանքը: Հայաստանի վարդապույն տուֆից և մարմարից քանդակված գեղեցիկ կերտվածքը, հիասքանչ Սուրբ Սեղանը նույնքան հմուտ ձեռքերով տեղադրվեց եկեղեցու խորանին: Քանդակագործին այդ գործում օգնեցին և իրենց աջակցությունը ցուցաբերեցին Մառնեուլիի շրջանի հայկական համայնքների հոգևոր հովիվ Տեր

Մովսես

քահանա

Աշուրյանը և համայնքի ջանասեր երիտասարդները:

Այս ուրախության առիթով Թբիլիսիից ավան ժամանեց նաև Վիրահայոց թեմի առաջնորդ Պերաշնորի Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը՝ առաջնորդության և «Հայարտուն» կենտրոնի պաշտոնության հետ միասին: Նա իր օրհնությունը բաշխեց քանդակագործ Անդրանիկ Սարգսյանին:

Նկատելի էր նաև համայնքի աշխուժությունը: Շատերը վաղ առավոտից այցելում էին եկեղեցի՝ դիտելու գեղեցիկ Սուրբ Սեղանը Աստվածամոր հրաշալի պատկերով:

Առաջնորդը նույն օրը շքախմբի ուղեկցությամբ այցելեց նաև մեկ այլ տաճար, որը խորհրդային տարիներին վերածվել է մշակույթի տան: Ավաղ, տաճարը գտնվում է թշվառ վիճակում: Սրբազան Հայրը հոգևոր դասի և աշխարհիկ անդամների հետ աղոթք բարձրացրեց, որ Տիրոջ օրհնությամբ և համայնքի աջակցությամբ ամբողջանան և ավարտվեն «Սուրբ Աստվածածին» եկեղեցու վերանորոգման աշխատանքները և մի օր էլ իր դռները հավատացյալների առջև բացի նաև մշակույթի տան վերածված 19-րդ դարի կառույց հինավուրց «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» եկեղեցին:

Վիրահայոց Թեմն իր երախտագիտությունն է հայտնում վրաց իշխանություններին եկեղեցու Սուրբ Սեղանը Վրաստան տեղափոխելու հետ կապված իրավական հարցերի կարգավորման գործում ցուցաբերած աջակցության և օժանդակության համար :

